ՀԱՅԱՍՏԱՆ–ԹՈՒՐՔԻԱ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (1991-2013 ԹԹ.)

ԱՖՍԱՆԵՀ ՇԻՐԱՆԻ (ԻԻՀ, ք. Սպահան)

1991-2013 թթ. հայ-թուրքական հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ ՀՀ և ԹՀ հարաբերությունների զարգացումները և միտումները բնութագրվում են բարդ ու հակասական ընթացքով, որ արտացոլում է պատմական իրողությունները տարբեր կերպ ընկալող պետությունների միջև: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համատեքստում Հայաստանին անընդունելի էր ցեղասպանությունը ժխտող Թուրքիայի կարծր դիրքը բանակցությունների ավարտից հետո:

Հայ-թուրքական ժամանակակից հարաբերությունների ընթացքը կարելի բաժանել երեք հիմնական ժամանակաշրջանների՝ հիմք ընդունելով քաղաքական իրադարձությունների կարևորությունը.

1) 1991-1994 թթ.՝ ԽՍՀՄ-ի փլուզումից մինչև Լ.Ղ. զինադադարի ժամանակաշրջանը, 2) 1995-2004 թթ.՝ սահմանի վերաբացման նախաձեռնության և առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման միտումների շրջան, 3) 2005-2013 թթ.՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման փորձեր:

Հայ-թուրքական հարաբերությունների ժամանակակից շրջանի զարգացման նախաշավիղները պետք է որոնել 90-ականի երկրորդ կեսերից: 1990 թ. օգոստոսի 23-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը հռչակեց անկախության վճիռը: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նորանկախ ՀՀ-ն փորձում է արտաքին գործուն քաղաքականություն վարել, հատկապես իր հարևանների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատել:

Հատկանշական է, որ նույն շրջանում Թուրքիան, իր քաղաքական և տնտեսական մարտահրավերների և հնարավորությունների համաձայն, սկսում է վարել նոր արտաքին քաղաքականություն: Թուրքիան, Անդրկովկասում և Միջին Ասիայում, մասնավորապես իր էթնոմշակութային կապերը օգտագործելով, փորձում է ամրապնդել իր դիրքը տարածաշրջանում՝ միաժամանակ վտանգելով Ռուսաստանի շահերը:

Համաձայն ՀՀ ԳԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի, «Հայաստանը քաղաքակիրթ երկրներին արժանավայել հարաբերություններ պետք է հաստատեր անխտիր բոլոր հարևանների, այդ թվում՝ Թուրքիայի հետ»[1]: 1991 թ. հունվարի 7-ին Թուրքիայի նախագահը հայտնում է, որ Թուրքիան ծրագրում է տնտեսական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ[2]: Այդպիսով երկու հարևան երկրների հարաբերությունների ասպարեզում սկսվում է մի նոր փուլ, և 1991 թ. ապրիլին ԽՍՀՄ-ում Թուրքիայի դեսպան Վոլքան

---

[1] **Չաքրյան Հ.,** *Ղարաբաղյան հիմնահարցը հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում, Ե., 1998, էջ 11:*

2 Ազգ, 27. IV. 1991:

Վուրալը պաշտոնական այց է կատարում Հայաստան, որտեղ հանդիպում է ՀՀ ԳԽ նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի հետ: Հանդիպման ընթացքում ՀՀ ԳԽ նախագահը մասնավորապես նշում է ամեն տեսակի փոխշահավետ համագործակցության մասին և ավելացնում, որ Հայաստանը որևէ տարածքային պահանջ չունի Թուրքիայից[3]:

ՀՀ-ի անկախության հռչակումից հետո, 1991 թ. դեկտեմբերի 16-ին Թուրքիայի կառավարությունը ճանաչում է ՀՀ անկախությունը, սակայն դիվանագիտական հարաբերություններ չի հաստատում Հայաստանի հետ:

Հետխորհրդային հայ-թուրքական հարաբերությունների հաստատման շրջանում թուրքական կողմը Հայաստանի առջև հետևյալ նախապայմաններն է դնում.

– հրաժարվել Թուրքիայի հանդեպ տարածքային պահանջներից,

– չհիշատակել 1915 թ. Հայոց ցեղասպանությունը,

– պաշտոնապես հրաժարվել պահանջատիրությունից,

– ընդունել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը:

Սակայն հայկական կողմը նախապայմաններ չի ընդունում: Եվ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը հիմնվում է միջազգային կազմակերպությունների՝ ՄԱԿ-ի, ԵԱՀԿ-ի, Եվրախորհրդի կառույցների և մի շարք միջազգային համաձայնագրերի ու պայմանագրերի վրա:

Պետք նկատել, որ վերջին տասնամյակների ընթացքում Անկարան ձգտում է նաև տնտեսական հարաբերություններ հաստատել Հայաստանի հետ: Այդ ուղղությամբ թուրքական կողմը հավանություն է տալիս «Ալարկո Հոլդինգ» բաժնետիրական ընկերության՝ Տրապիզոնի նավահանգիստը ՀՀ-ի տրամադրության տակ դնելու ծրագրին, որի նպատակն էր միջինասիական հանրապետությունների՝ Ուզբեկստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Ղազախստանի և Թուրքմենստանի հումքը՝ բնական գազն ու նավթը, Հայաստանի վրայով փոխադրել Տրապիզոն, այդտեղից էլ կազմակերպել դրա տեղափոխությունը Արևմուտքի շուկաներ[4]: Այդպիսով Հայաստանը դառնում էր ազատ առևտրի գոտի և դուրս էր գալիս շրջափակումից: Թուրքիայի նախաձեռնությամբ բարձրացվեց Սևծովյան տնտեսական համագործակցությանը Հայաստանի անդամակցության հարցը: Այդ ծրագրով նախատեսվում էին սահմանային որոշ կետերի բացումը, Հայաստանում ազատի գոտու վերականգնումը, արդյունաբերական ձեռնարկությունների արդիականացումը:

1992 թ. փետրվարի 13-ին Իցհակ Ալաթոնի հրավերով հայկական պատվիրակությունը այցելում է Թուրքիա՝ ծանոթանալու Հայաստանին տրամադրվող ազատ գոտու պայմաններին: Ալաթոնի ծրագրով նախատեսվում էր նաև Էրզրում-Տրապիզոն երկաթգծի շինարարությունը:

1992 թ. փետրվարից ի վեր հայ-թուրքական հարաբերություններում նշանակալի լարվածություն է նկատվում ԼՂ-ում կատարվող

---

[3] Независимая газета, 14.V.1991.

[4] **Չաքրյան Հ.,** նշվ. աշխ., էջ 15:

իրադարձությունների պատճառով. Խոջալուի դեպքերի և Շուշիի գրավման հետևանքով Թուրքիան հրաժարվում է Ալաթոնի ծրագրից[5]:

Սակայն հետագայում ստեղծված որոշակի դրական իրավիճակի շնորհիվ 1992 թ. հունիսի 23-26-ին հայկական պատվիրակությունը գնում է Թուրքիա, իսկ 1992 թ. օգոստոսի 23-25-ը Թուրքիայի պատվիրակությունը փոխարտգործնախարարի տեղակալ Բիլգին Ունանի գլխավորությամբ ժամանում է Երևան, որտեղ հայկական կողմը պատրաստակամություն է հայտնում դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար, իսկ թուրքականը համաձայնագիր ստորագրելուց առաջ Հայաստանից պահանջում է Թուրքիայի և Ադրբեջանի տարածքային ամբողջականության ճանաչումը: Կողմերը պայմանավորվում են գոյություն ունեցող սահմանների ճանաչման հարցի վերաբերյալ բանակցություններն ավարտել 1993 թ. ձմռանը[6]:

1993 թ. ՀՀ-ում տնտեսական ճգնաժամային պայմաններում Թուրքիան թույլ է տալիս իր տարածքով տեղափոխել արտասահմանից ՀՀ առաքվող մարդասիրական օգնությունները: Չնայած 1992 թ. սեպտեմբերի 17-ին Եվրոպայի խորհրդի՝ ստամբուլյան հանդիպման ժամանակ ՀՀ ԱԳ նախարար Ռաֆֆի Հովհաննիսյանը կոշտ հայտարարություններ է անում Թուրքիայի վերաբերյալ՝ նրան մեղադրելով Հայոց ցեղասպանության մեջ, ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ չհաստատելու և ղարաբաղյան հարցում չեզոք դիրք չպահպանելու համար:

Քելբաջարի (Քարվաճառ) գրավումը հայկական ուժերի կողմից 1993 թ. ապրիլ ամսվա ընթացքում նորից նկատելի լարվածություն է առաջացնում հայ-թուրքական հարաբերություններում, և նույնիսկ Թուրքիայի նախագահ Թ. Օզալը այդ առիթով մատավախությունն է արտահայտում. «Վերևից և ներքևից միջանցք բացեցին և փաստորեն այդ շրջանը կապեցին Հայաստանին: Այլևս ղարաբաղյան խնդիր չկա, կան Հայաստանի նկրտումները Մեծ Հայաստանի մասին»[7]: Դրա հետևանքով ՀՀ-ն բազմակողմանի շրջափակման է ենթարկվում Թուրքիայի կողմից. հիմնականում ձեռնարկվում են հետևյալ գործողությունները.

1. Թուրքիան, փակելով "Н-50" անվանյալ՝ միջազգային օդային միջանցքը, թույլ չի տալիս օդանավերի թռիչքները դեպի Հայաստան:

2. Փակվում է Գյումրի-Կարս երգաթգիծը:

3. Արգելվում է մարդասիրական օգնությունների փոխադրումը Թուրքիայի տարածքով[8]:

---

[5] *Նույն տեղում, էջ 21:*

[6] **Gerard J. Libaridian.** *Modern Armenia: People, Nation, State, Chicago, 2004, p. 269.*

[7] *Milliyet, 08.04.1993.*

[8] *ՀՀ ԱԳՆ, Մերձավոր և Միջին Արևելքի վարչություն, Թուրքիայի բաժին, Հայաստան-Թուրքիա, Ժամանակագրություն (Հայաստան–Թուրքիա. Բաց երկխոսություն, Հասարակական երկխոսություն և զարգացումների կենտրոն, Ե., 2005,*

Քելբաջարի գրավումից հետո Թուրքիան միջազգային ասպարեզում դիվանագիտական գործունյա քաղաքականություն է վարում, որի հետևանքով 1993 թ. ապրիլի 30-ին ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը ԼՂ-ի հակամարտության վերաբերյալ ընդունեց 822 բանաձևը. համաձայն որի, հայկական կողմից պահանջվում էր ուժերը դուրս բերել Քելբաջարից ու այլ տարածքներից, և կոչ էր արվում վերսկսելու բանակցությունները ԵԱՀԽ շրջանակում[9]:

Պետք է նշել, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ ներկայացվել են որոշ ծրագրեր, այդ թվում՝ Պոլ Հոբլի ծրագիրը, որով նախատեսվում էր ԼՂ-ի մի մասը միացնել ՀՀ-ին, իսկ մյուսը՝ ԱՀ-ին: Այդ ծրագրով ՀՀ-ն զրկվում էր ԻԻՀ-ի հետ ընհանուր սահման ունենալու հնարավորությունից, իսկ Ռուսաստանը՝ Միջին Արևելքի հետ ցամաքային կապից[10]:

1993 թ. ԱՄՆ-ը ներկայացնում է նման մի այլ ծրագիր, որի նպատակն էր հակամարտությանը վերջնական լուծում տալը: Ըստ այդմ, ապահովվում էր նաև Թուրքիայի և Ադրբեջանի ցամաքային անմիջական կապը Նախիջևանի վրայով: Այդպիսով Կասպից ծովի նավթի փոխադրումը Թուրքիա կատարվելու էր Ադրբեջանի տարածքով:

1993 թ. հայերի հաղթանակները ԼՂ-ում անհանգստացնում են նաև Արևմուտքին, և ամերիկյան մամուլը զգուշացնում է. «Այս տարվա ռազմական հաղթանակներով ոգևորված՝ շատ հայեր սկսել են [խոսել] Մեծ Հայքը Եվրոպայից մինչև Ասիա տարածվող կայսրությունը վերականգնելու մասին»[11]:

Հետխորհրդային հայ-թուրքական հարաբերությունների առաջին շրջանը ավարտվում է 1994 թ. մայիսի 12-ին Լեռնային Ղարաբաղում կնքված զինադադարով, որը կայացավ Ռուսաստանի միջնորդությամբ: Եվ, այսպիսով, ուժեղացավ Մոսկվայի ազդեցությունը Անդրկովկասում:

Հայ-թուրքական հարաբերությունների զարգացումը իրականում երկու հարևան երկրների հարաբերությունների կարգավորման հարց չէր: Դրանում արդեն ներգրավված էին տարածաշրջանային և նույնիսկ ոչ տարածաշրջանային երկրների շահերը և նկրտումները, որոնք հակամարտության մեջ արտաքին կարևոր դրդապատճառ էին, որ իրականում ավելի է բարդացնում հարաբերությունների կարգավորումը. «Ահա թե ինչու ԵԱՀԿ Մինսկի խմբի ձեռնարկումներն անընդհատ բախվում են Մոսկվայի դիմակայությանը, իսկ Լեռնային Ղարաբաղի շուրջ ուրվագծվում է Ռուսաստան-ԱՄՆ մրցապայքարը»[12]:

էջ 109): Տե՛ս նաև **Արշակյան Գր.**, *Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ., Ե., 2009, էջ 65-66:*

[9] **Freddy De Pauw.** *Turkey's Policies in Transcaucasia (Contested Borders in the Caucasus, VUB University Press, 1996, p. 118).*

[10] **Оганесян Н.** *Карабахский конфликт. Этапы. Подходы. Варианты решения, Е.,1997, с. 55-57.*

[11] **Չաքրյան Հ.**, *նշվ. աշխ., էջ 31:*

[12] *Նույն տեղում, էջ 35:*

1995-2001 թթ. ժամանակահատվածում հայ-թուրքական հարաբերությունները[13] բնորոշվում են, հատկապես, սահմանի վերաբացման քաղաքականությամբ և հայ-թուրքական առևտրատնտեսական համագործակցության նախաձեռնություններով. դա ուսումնասիրության առանձին թեմա է, որին կանդրադառնանք հետագայում:

Հայ-թուրքական հարաբերությունների նոր փուլն սկսվեց 2005 թ. ապրիլի 13-ին, երբ Թուրքիայի վարչապետ Ռեջեբ Թայիփ Էրդողանը պաշտոնական գրություն հղեց ՀՀ նախագահին, որը համարվում է հայ-թուրքական հարաբերությունների նոր շրջանի առաջին գրավոր փաստաթուղթը: Դրանում առաջարկվում էր ստեղծել նաև պատմաբանների խորհուրդ՝ 1915 թվականի իրադարձությունները ուսումնասիրելու համար:

2005 թ. ապրիլի 25-ին ՀՀ նախագահը պատասխան գրություն է ուղարկում ԹՀ վարչապետին: Wikileaks*-ը հրապարակել է Ռ. Քոչարյանի պատասխան-նամակը, որն այն ժամանակ Հայաստանում ԱՄՆ-ի դեսպան Ջոն Էվանսը ուղարկել է ԱՄՆ-ի պետքարտուղարություն՝ դրան կցելով Հայաստանի ԱԳՆ-ի մեկնաբանությունները[14]: ՀՀ նախագահը իր պատասխանում մասնավորապես նշում է. «Հարգելի՛ պարոն վարչապետ, ես ստացել եմ Ձեր նամակը: Որպես երկու հարևաններ՝ մենք պետք է աշխատենք ճանապարհներ գտնել միասին ներդաշնակ ապրելու համար: Ահա թե ինչու առաջին օրվանից Ձեզ պարզեցինք մեր ձեռքը՝ հաստատելու համար հարաբերություններ, բացելու սահմանը և երկխոսություն սկսելու երկու երկրների և ժողովուրդների միջև»[15]:*

ՀՀ-ի և ԹՀ-ի միջև հարաբերությունների կարգավորման վերաբերյալ Հայաստանի պաշտոնական դիրքորոշման հիմնադրույթները տեղ են գտել 2007 թ. Ազգային անվտանգության ռազմավարության մեջ, որտեղ ամրագրված է. «Հայաստանը հանդես է գալիս Թուրքիայի հետ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերությունների հաստատման օգտին և շարունակելու է ձեռնարկել համապատասխան քայլեր խոչընդոտների հաղթահարման, երկկողմ հարաբերությունների բարելավման ուղղությամբ"[16]:

Հայ-թուրքական հանդիպումների ընթացքում Թուրքիայի նախաձեռնությամբ ներկայացվում է «Կովկասյան կայունության և համագործակցության պլատֆորմը» (2008թ.): Դիվանագիտական հարաբերություններ հաստատելու համար Թուրքիան առաջ է քաշում մի շարք նախապայմաններ, այդ թվում՝ ԼՂ-ի վերահսկողության տակ գտնվող շրջանները վերադարձնել Ադրբեջանին, հրաժար-

---

[13] *Այս կապակցությամբ ավելի ընդարձակ տե՛ս* **Արշակյան Գ.**, *Թուրքական քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ., Ե., 2009, էջ 75.*

[14] *http://www.azatutyun.am/content/article/24306989.html Տե՛ս նաև Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, Ե., 2011, էջ 414-415:*

[15] *Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, էջ 415:*

[16] *ՀՀ Ազգային անվտանգության ռազմավարություն (հավանության է արժանացել ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի 2007 թ. հունվարի 26-ի նիստում):*

վել Հայոց ցեղասպանության միջազգային և Հայաստանի կողմից 1921 թ. Կարսի պայմանագրի միակողմանի ճանաչումից: Սակայն սահմանի բացման հարցը Թուրքիան անվերապահորեն կապում է ԼՂ հիմնախնդրի կարգավորման հետ:

2008 թ. սեպտեմբերին Թուրքիայի նախագահի այցով Հայաստան երկխոսության նոր փուլ սկսվեց հարաբերությունների կարգավորման համար, որը դիվանագիտական շրջանակներում հայտնի է «ճանապարհային ծրագիր" կամ «ֆուտբոլային դիվանագիտություն" անվանումներով: Սա Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյայի առաջին պաշտոնական այցն էր Երևան՝ 73 տարի հետո:

2009 թ. հոկտեմբերի 10-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը իր ուղերձում՝ ուղղված Հայաստանի ժողովրդին և համայն հայությանը, նշում է. «Թուրքիայի հետ առանց նախապայմանների հարաբերությունների հաստատումն այլընտրանք չունի: Դա ժամանակի հրամայականն է: Այս անհրաժշտությունը չէ այսօր տարակարծությունների առարկան: Առանձին անհատների ու քաղաքական ուժերի մտավախությունը ծնվում է ստորագրվող արձանագրությունների մի քանի դրույթների տարակերպ մեկնաբանություններից ու Թուրքիայի հանդեպ պատմական անվստահությունից"[17]:

2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխ քաղաքում ՀՀ և ԹՀ ԱԳ նախարարները ստորագրեցին «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունները[18]:

Ցյուրիխի պայմանագիրը և 2009 թ. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ու ԹՀ վարչապետ Էրդողանի հանդիպումը արագացրեցին բանակցությունների ընթացքը, և ՀՀ և ԹՀ ԱԳ նախարարները պայմանագիր են ստորագրում[19]:

Պետք է նշել, որ 2010 թ. հունվարի 12-ին ՀՀ Սահմանադրական դատարանը որոշում է. 1. «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրություններում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմա-նադրությանը»:

2. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն, սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից»:

---

[17] Հայ-թուրքական հարաբերություններ. հիմնախնդիրներ և հեռանկարներ, էջ 436:

[18] Տե՛ս ՀՀ-ի և ԹՀ-ի միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին արձանագրությունը՝ ստորագրված ՀՀ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանի և ԹՀ Ագ նախարար Ահմեդ Դավութօղլուի կողմից:

[19] The Establishment of Diplomatic Relations between the Republic of Armenia and the Republic of Turkey, October 10, 2009, Signed in Zurich.

Սակայն ՀՀ-ի և ԹՀ-ի միջև արձանագրությունների ստորագրումից հետո Թուրքիայի Ազգային մեծ ժողովում արձանագրությունների վավերացումը պայմանավորվում է ԼՂ-ի հիմնահարցի կարգավորմամբ:

2010 թ. ապրիլի 22-ին, հաշվի առնելով թուրքական կողմի պատճառով ստեղծված իրավիճակը, ինչպես նաև արձագանքելով ՀՀ իշխող կոալիցիայի կուսակցությունների քաղաքական խորհուրդների համատեղ դիմումին՝ ՀՀ նախագահը հրամանագիր ստորագրեց «Արձանագրությունների վավերացման գործընթացի կասեցման մասին»:

Այսպիսով, 1991-ից ի վեր հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման բազմաթիվ փորձեր են արվել, սակայն վերջին իրադարձությունները ցույց տվեցին, որ խնդիրը փակուղի մտավ և տարածաշրջանում շահագրգիռ երկրների արտաքին քաղաքականության մեջ նոր մարտահրավերների հանգեցրեց:

Հայ-թուրքական հարաբերություններին վերաբերող վերջին իրա-դարձություններից է 2013 թ. դեկտեմբերի 12-ին ԹՀ արտգործնախարար Դավութօղլուի այցը ՀՀ, որտեղ նա մասնակցել է Սնծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության արտգործնախարարների խոր-հրդի նիստին: Կարծիքներ կան, որ Վիեննայում ՀՀ և ԱՀ նախագահների բանակցություններից հետո Դավութօղլուն այս այցի ընթացքում ՀՀ-ին առաջարկել է ԼՂ 7 շրջաններից առնվազն երկուսը դուրս բերել նրա կազմից՝ միջպետական սահմանը բացելու փոխարեն: Սակայն կան նաև կարծիքներ, որ Դավութօղլուի այցը Երևան ավելի շատ քարոզչական բնույթ է ունեցել:

РАЗВИТИЕ МЕЖГОСУДАРСТВЕННЫХ ОТНОШЕНИЙ АРМЕНИЯ–ТУРЦИЯ (1991-2013 ГГ.)

АФСАНЕ ШИРАНИ (ИРИ, г. Исфаган)

Резюме

В 1991-2013 гг. армяно-турецкие отношения были весьма сложными и противоречивыми, что является отражением разного восприятия исторических реалий. В контексте урегулирования армяно-турецких отношений для Армении неприемлема позиция Турции в вопросе отрицания геноцида. В процессе армяно-турецких контактов на правительственном уровне Турция выдвигала определенные предусловия для установления дипломатических отношений, настаивая на возврате Азербайджану территорий, подконтрольных

НКР, и на отказе от международного признания геноцида армянского народа.

THE DEVELOPMENT OF ARMENIAN-TURKEY BILATERAL RELATIONS IN 1991-2013

AFSANEH SHIRANI (IRI, Isfahan)

Abstract

Between 1991-2013, the relations between Armenia and Turkey were rather controversial and complex reflecting diverse perceptions of historical events. In the context of the regulation of Armenian-Turkish relations, Turkey's position in denying Genocide is unacceptable.

In the process of Armenian-Turkish contacts, Turkey offered preconditions for the diplomatic relations insisting on giving back Azerbaijan's territories, which are under the control of Nagorno-Karabakh, and on denying the international recognition of the Armenian Genocide.